# ՄԵՐԿԱՑՎԱԾ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Իրենց հակահեղափոխական սև գործը կատարելու համար, կուսակցությանը թիկունքից հարվածելու համար տրոցկիստներն ու ամեն գույնի հակահեղափոխականները միշտ էլ ձգտել են ամեն կերպ, ամենաստոր կեղծիքով ու յերկերեսանիությամբ սողոսկել կուսակցության շարքերը և քողարկվելով կուսակցական տոմսի տակ՝ քայքայիչ, վնասարարական աշխատանք կատարել:

Միայն յերկու օր առաջ մեզ մոտ մերկացվեց Ջեթ—Ոճառ գործարանի կուսկազմակերպության անդամ, տարիներ շարունակ այդպիսի ստոր յերկերեսանիությամբ կուսակցության շարքերում թաքնված հակահեղափոխական տրոցկիստ՝ գործարանի դիրեկտոր Խաչիկ Դեմիրչյանը:

Ամբողջ տասը տարի յե, վոր յերկերեսանիությամբ, կեղծիքով, թաքցնելով իր հակահեղափոխական դեմքը, այդ սրիկան մնացել է կուսակցության շարքերում:

Սկզբնական կուսկազմակերպության վերջին ժողովում եր նա փորձեց վոչ միայն քողարկել իր դեմքը, այլև տրոցկիստին հատուկ մեթոդներով ու մանյովրներով շեղել կազմակերպության ուշադրությունն իր հարցի քննությունից, մի շարք խուլիգանական բնույթի արտահայտություններ թույլ տալով կազմակերպության հասցեյին և փորձելով վարկաբեկել մի շարք կուսակցական ընկերների:

Անհերքելի փաստերով ու կենդանի մարդկանց վկայություններով ժողովում վերջնականապես ու լիովին մերկացվեց այդ սրիկայի դեմքը՝ վորպես թաքնված հակահեղափոխական տրոցկիստ, վորը դեռ 1927 թվականից կապված է յեղել տրոցկիստական ոպոզիցիայի ղեկավարների հետ, տրոցկիստական գրականություն է ստացել նրանցից և այդ բոլորը մինչև վերջն էլ վարպետորեն թաքցրել է կուսակցությունից: Բնորոշ են հակահեղափոխական տրոցկիստ Խաչիկ Դեմիրչյանի՝ դաշնակցական տարրերի հետ միահյուսվելու և իր աշխատանքի տրոցկիստական պրակտիկայի փաստերը:

Դեմիրչյանը Ջեթ—ոճառ գործարանում իր շուրջն եր համախմբել հակահեղափոխական տրոցկիստական, դաշնակցական տարրեր, դաշնակցական նախկին սպաներ և խմբապետներ: Այդ մարդկանց վրա յեր նա հենվում իր վողջ աշխատանքի ընթացքում, վորոնք ոգնում եյին Դեմիրչյանին միշտ քողարկելու գործարանի ճեղքվածքները, աչքակապություն անելու գործարանի պլանների կատարման գործում, ջանալով լավ աշխատողի համբավ ստեղծել իր համար և թաքնվել դրա տակ:

Ի հակակշիռ դաշնակցական և տրոցկիստական տարրերի նկատմամբ ունեցած իր հոգատար ու սիրալիր վերաբերմունքի, նրանց նյութական ամեն մի ոժանդակություն ցույց տալուն՝ Դեմիրչյանն ամենաանողոքի վերաբերմունքն եր ցույց տալիս գործարանի կոմունիստներին, վորոնք այս կամ այն առիթով քննադատում եյին նրան: Ինքնաքննադատության ճնշման նրա մշտական միջոցները յեղել են քննադատողին տնտեսապես ճնշելը, աշխատավարձը պակասեցնելը, աշխատանքից հեռացնելը, ցածր աշխատանքի նշանակելը, բնակարանից վտարելը, վերջապես՝ ուղղակի ահաբեկելը:

Պատահել է նույնիսկ այնպիսի դեպք, վոր մի ժողովից հետո Դեմիրչյանն իր առանձնասենյակն է կանչել կուսանդամ ընկ. Անուշավան Ամիրխանյանին և ատրճանակը ձեռքին ամենալկտի խուլիգանական խոսքերով սպառնացել նրան, թե այլևս չհամարձակվես իմ մասին մի խոսք ասել:

Նա մեծ ջանքեր է թափել իր ապարատում յեղած դաշնակցական, տրոցկիստական վիժվածքներին քողարկելու և պահպանելու համար: Յերբ քողարկված դաշնակցական Խաչիկ Խաչատրյանը կուսակցությունից հեռացվեց, Դեմիրչյանը մի քանի անգամ անձամբ գնաց կուսկոլեգիայի նախկին քարտուղար, հակահեղափոխական տրոցկիստ Գալոյանի մոտ՝ նրա ոգնությամբ այդ դաշնակցականին կուսակցության մեջ վերականգնելու համար:

Նացիոնալիստ, հակահեղափոխական Խանջյանի պրովոկացիոն ինքնասպանությունից հետո, յերբ մեր յերկրի վողջ աշխատավորությունը խոր զայրույթով և նողկանքով պատասխանեց դրան, պատահական չե, վոր հակահեղափոխական տրոցկիստ Դեմիրչյանը՝ ձայնակցելով դաշնակցական տարրերին՝ սկսեց ամենալկտի պրովոկացիաներ տարածել կուսակցության հասցեյին:

Սկզբնական կուսկազմակերպությունը Դեմիրչյանի հարցով մեկ անգամ չե, վոր զբաղվել է: Կուսկազմակերպությունը Դեմիրչյանի հակահեղափոխական դիմակը լիովին պատռել եր դեռ անցյալ տարվա հուլիսի 16-ի իր ընդհանուր ժողովում, նրան հեռացնելու հարցը դնելով ռայկոմի առաջ:

Սակայն զարմանալ կարելի յե, վոր Ստալինյան ռայկոմն այնքան դանդաղկոտություն հանդես բերեց այդ սրիկայի մերկացման գործում:

***

Հակահեղափոխական տրոցկիստները, նացիոնալիստները ձգտում են ավելի խոր ու վարպետորեն թաքնըվել, դիմակավորվել՝ կուսակցության ջախջախիչ հարվածներից փրկվելու և իրենց վնասարարական, դիվերսիոն, լրտեսական գործունեությունն առաջ տանելու համար:

Կուսփաստաթղթերի ստուգումից և